



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

01 հուլիսի 2021 թվականի թիվ 117-Ա

ք. Երևան

#### «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի հունիսի 21-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 41 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Արմնուզ» տեսալսողական ծրագրի 2021 թվականի հունիսի 20-ի եթերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում՝ ընտրությունների քվեարկության օրը քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութի հեռարձակման միջոցով սահմանված կարգի պահպանման վերաբերյալ դրույթների պահանջների խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի հունիսի 21-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2021 թվականի հունիսի 21-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Արձանագրության մեջ մասնավորապես նշված է.

Սույն թվականի հունիսի 20-ին ժամը 13:33:54-ից մինչև 13:37:42-ը եթեր է հեռարձակվել «Ընտրախախտումներ» վերնագրով տեսալսողական հաղորդումը, որի ընթացքում հեռարձակված ռեպորտաժի ընթացքում (ժամը 13:33:54-ից մինչև 13:34:06-ը) լրագրողը հանդես է գալիս հետևյալ խոսքերով՝ մեջբերում.

*«Արամ Վարդևանյանն է ահազանգում, Հայաստանի Հանրապետության հեռացող կառավարությունն և ԱԱԾ-ն սկսել են հերթական օպերացիան ընդդեմ «Հայաստան» դաշինքի և դաշինքի շտաբի նկատմամբ»:*

Լրագրողի խոսքը համադրված է Արամ Վարդևանյանի ելույթից մի հատվածով, որի ընթացքում նրա ետևում երևում է «Հայաստան» դաշինքի խորհրդանիշով պաստառը, իսկ ռեպորտաժի (ժամը 13:34:06-ից մինչև 13:34:44-ը) շարունակության ընթացքում՝ Արամ Վարդևանյանի ուղիղ խոսքն է և խոսքի ընթացքում անընդմեջ, նրա ետևում երևում է «Հայաստան» դաշինքի խորհրդանիշով պաստառ:

Մեջբերում Արամ Վարդևանյանի խոսքից.

*«Մեկ զեկուցագրի հիման վրա ներկայացվում է միջնորդություն Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որպեսզի ստանա թույլտվություն խուզարկություն իրականացնել «Հայաստան» դաշինքի Սյունիքի մարզի գրեթե բոլոր նախընտրական շտաբերի տարածքներում»:*

Ըստ արձանագրության նույն օրը ժամը 16:11:30-ից մինչև 16:14:40-ը եթեր է հեռարձակվել ստույիս, որը հրատապ հրավիրվել է «Պատիվ ունեմ» դաշինքն իր Կենտրոնական շտաբում: Աստույիսին մասնակցող «Պատիվ ունեմ» դաշինքի ներկայացուցիչ Սոս Հակոբյանը պատասխանում է հարցերին, մասնավորապես նշում է, մեջբերում.

*«Արարկիրի 4/14 տեղամասում 6-րդ և 9-րդ քվեաթերթիկները պարբերաբար շփոթելու մասին, ինչպես նաև այն մասին, որ նշված ընտրատարածքում ընտրողներին տրամադրված քվեաթերթիկների փաթեթներում բացակայել են 6-րդ համարի քվեաթերթիկներ և, որոնք տրամադրվել են միայն նրանց պահանջից հետո»:*

Ռեպորտաժի ամբողջ ընթացքում Սոս Հակոբյանը կանգնած է եղել բեմի վրա և նրա ետևում երևում է «Պատիվ ունեմ» դաշինքի խորհրդանիշով պաստառ, իսկ ռեպորտաժի ավարտին՝ ժամը 16:14:12-ից մինչև 16:14:28-ը Էկրանին ծածանվում էր «Պատիվ ունեմ» դաշինքի դրոշը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի հունիսի 23-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը վարչական վարույթի շրջանակներում որևէ բացատրություն չի ներկայացրել Հանձնաժողով:

### ***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի համաձայն՝ ընտրությունների նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների մասին օրենսդրությանը համապատասխան.

Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են.

2. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն իրականացնելը:

3. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրը ուղիղ եթերի ժամանակ քարոզչություն հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե քարոզչության հեղինակն ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի քարոզչության դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է:

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝

«Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12)-րդ կետի համաձայն Հանձնաժողովը՝ վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 68-Ա որոշմամբ հաստատված «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանության» 8-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հեռարձակողների կողմից հեռարձակված տեսալսողական ծրագրերը ուսումնասիրելիս, բացառությամբ Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի, դիտարկողը գնահատում է նաև՝ Ընտրությունների քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչական նյութի՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչության իրականացման առկայության հանգամանքը:

Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողը տեսալսողական տեղեկատվություն հեռարձակելիս պարտավոր է պահպանել Օրենքով, իսկ ընտրությունների ընթացքում նաև ընտրությունների մասին օրենսդրությամբ սահմանված տեսալսողական տեղեկատվությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ ընտրությունների մասին օրենսդրությամբ հստակ սահմանված է որ ընտրությունների քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ

հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչություն իրականացնելը:

Վարչական վարույթի քննարկման նիստին մասնակցում էր նաև Հեռարձակողի ներկայացուցիչը, ով ներկայացրեց Հեռարձակողի գրավոր բացատրությունը, համաձայն որի՝ Հեռարձակողը նախ և առաջ անդրադարձել է արձանագրության անորոշությանը և այդ կապակցությամբ բացատրություն ներկայացնելու առնվազն խնդրահարույց լինելուն: Այնուհետև, անդրադարձել է արձանագրությամբ ներկայացված Հեռարձակողի գործողությանը հայտարարության և ասուլիսում տրված հարցին ներկայացված պատասխանի լուսաբանմանը և դրա որպես խախտում որակելու իրավական հիմք սահմանված իրավական նորմին և նշել, որ ըստ արձանագրության որպես Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում է որակվել հեռարձակվող տեսանյութի անհամապատասխանությունը Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի հատկանիշներին: Ըստ Հեռարձակողի՝ Օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է ընտրությունների քվերակության օրը քարոզչությանը վերաբերվող երկու կանոն.

1. Հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն իրականացնելը՝ քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ հեռարձակելու արգելքը,
2. Հոդվածի 3-րդ մասով նախատեսված ուղիղ եթերի ժամանակ քարոզչություն հնչելու դեպքում քարոզչության հեղինակին ուղիղ եթերում իրավախախտման մասին զգուշացվելու և կրկնակի քարոզչության դեպքում ուղիղ եթերը դադարեցվելու պարագայում Հեռարձակողի պատասխանատվությունից ազատելը:

Հեռարձակողն անդրադառնալով արձանագրությամբ Հեռարձակողին վերագրվող Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի ենթադրյալ խախտմանը նշել է, որ մշտադիտարկման ենթարկված ռեպորտաժների մի մասը հանդիսանում են ուղիղ եթերով հեռարձակված և Հեռարձակողի հետագա եթերներում դրանց կամ դրանց դրվագների կրկնությունը չի հանգեցնում դրանց տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումներ որակելուն:

Միաժամանակ Հեռարձակողը գտնում է, որ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում առկա ցանկացած այլ ձևով արտահայտությունը չի կարող տարածվել նույն հոդված 3-րդ մասով նախատեսված ուղիղ եթերի հեռարձակման վրա, որի պարագայում նույն մասով նախատեսված գործողությունների կատարումը ազատում է Հեռարձակողին պատասխանատվությունից, հակառակ դեպքում կարելի է արձանագրել, որ երկու մասերի միջև առկա է հակասություն:

Հեռարձակողը նշում է նաև, որ այս պարագայում առնվազն ենթակա է քննարկման արդյո՞ք ՀՀ օրենսդրությունը, ներառյալ՝ հարաբերությունները կարգավորող որևէ իրավական ակտ, հնարավորություն է ընձեռում Հեռարձակողին ստեղծված իրավիճակում թե՛ հայտարարություն կատարողին զգուշացնել իրավախախտման մասին, թե՛ չհեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութը: Այսինքն արդյո՞ք Հեռարձակողն օժտված է բավարար գործիքակազմով պարզելու և հիմնավորելու, որ ուղիղ եթերում հնչեցվածը հանդիսանում է քարոզչություն, այսինքն պարունակում է քարոզչական կամ քարոզչությանը նպաստող տեղեկատվություն, վերջինս որակելով որպես իրավախախտում կամ պարզելու և հիմնավորելու որ առկա հեռարձակման ենթակա նյութը կարող է որակվել որպես քարոզչական կամ քարոզչությանը նպաստող:

Այնուհետև նշում է, որ առկա օրենսդրությունը չի պարունակում որևէ սահմանում թե՛ ի՞նչ է քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութը, ինչը ոչ միայն զրկում է Հեռարձակողին կանխատեսելու իր գործողությունների հետևանքները այլև ստեղծում է լայն

հնարավորություններ քարոզչություն կատարելու նպատակ հետապնդող անձանց համար իրականացնելու քողարկված քարոզչություն:

Ըստ Հեռարձակողի, ակնհայտ է, որ Հեռարձակողին որպես ենթադրյալ խախտում վերագրվող արարքի կատարման հիմքում դրված Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանափակումները, ոչ միայն կիրառելի չեն սույն իրավիճակում այլև չեն բավարարում օրենքի կանխատեսելիության և որոշակիության կանոններին: Մասնավորապես հայտնի է, որ նորմը չի կարող դիտվել որպես «օրենք», այսինքն սույն պարագայում Հեռարձակողի համար որոշակի սահմանափակումներ նախատեսող վարքագծի կանոն, եթե այն ձևակերպված չէ բավարար հստակությամբ, հնարավորություն տալով անձին, եթե անհրաժեշտ լինի պատշաճ խորհրդատվության օգնությամբ, տվյալ հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսել այն հետևանքները, որ տվյալ գործողությունը կարող է հանգեցնել:

Հեռարձակողը նշում է նաև, որ վերոգրյալը հիմնավորվում է նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի՝ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Միաժամանակ նշում է, որ արձանագրությունում նկարագրված իրավիճակը՝ ընտրախախտումների վերաբերյալ հայտարարությունների լուսաբանումը, նախ և առաջ հարկ է դիտարկել իրավունքի չարաշահման տեսանկյունից, որպեսզի հնարավոր լինի պարզել ենթադրյալ խախտման իրական կատարողին և ազատել պատասխանատվությունից իրավունքի չարաշահման գոհին:

Ըստ Հեռարձակողի, ակնհայտ է, որ վերը ներկայացված օրենսդրական բացերի և քվերակության օրը նախընտրական քարոզչություն իրականացնելու որևէ կանխատեսելի կանոնի բացակայությունը կարող է օգտագործվել մասնավորապես ընտրությունների մասնակիցների կողմից, որոնք կարող են օգտագործել կարևոր իրադարձությունների լուսաբանման հեռարձակողների պարտավորությունը քողարկված քարոզչություն իրականացնելու նպատակով և չեն բացառվում նաև դեպքերը, երբ ընտրությունների մասնակիցները կարող են ինքնուրույն արհեստականորեն ստեղծել լուսաբանման ենթակա իրադարձություններ՝ նպատակ ունենալով քվերակության օրը շրջանառել համապատասխան թեկնածուի անունը, օրինակ՝ բեմականացված մահափորձ կազմակերպելով կուսակցության անդամի դեմ:

Հեռարձակողն իր բացատրությունում անդրադարձել է ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կարգավորումներին և գտնում է, որ նման կարգավորումներով սահմանված պարտականության առկայության դեպքում իրադարձությունը ենթակա է լինելու լուսաբանման հեռարձակողների կողմից և առնվազն անհասկանալի է թե՛ ինչ եղանակով է հնարավոր ապահովել նման իրադարձությունների լուսաբանումը, առանց նշելու կուսակցության անվանումը, որպեսզի նման նշում կատարելը չվորակվի որպես քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութի հրապարակում:

Հեռարձակողը գտնում է, որ սույն պարագայում ակնհայտ է, որ նախ և առաջ իրականացվող վարչական վարույթի շրջանակներում որպես առաջնահերթ պարզման ենթակա հանգամանք է հանդիսանում Հեռարձակողի գործողություններում մեղքի առկայությունը:

Այնուհետև, Հեռարձակողն անդրադարձել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-11-րդ հոդվածներին, որոնք կարգավորում են, թե՛ որ գործողությունը կամ անգործությունն են համարվում վարչական իրավախախտում:

Հեռարձակողը նշում է, որ վերոգրյալով պայմանավորված ակնհայտ է, որ քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ հասկացությունների որևէ բացատրության բացակայությունը կոնկրետ արձանագրությամբ նկարագրված իրավիճակում, երբ լուսաբանված նյութերում հայտարարություններ կատարողները իրենց կողմից սովորաբար հանդես գալու բոլորի համար սովորական պայմաններում կատարել են հայտարարություններ պետական մարմինների կողմից սկսված իրավական գործընթացների կամ պետական մարմինների կողմից ընտրությունների կազմակերպման խնդիրների մասին, գրկում է Հեռարձակողին կանխատեսելու իր կողմից կատարման ենթակա կամ ձեռնպահ մնալու գործողությունները, ինչի պարագայում բացառվում է Հեռարձակողին այնպիսի արարքի վերագրումը, որը կատարվել է մեղավորությամբ թե՛ դիտավորյալ, թե՛ անզգույշ:

Ըստ Հեռարձակողի, հատկանշական է նաև այն իրողությունը, որ օրինակ՝ Հանձնաժողովի որոշմամբ հաստատված մեթոբանությունը հիմնականում պարունակում է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում գործողությունների հետևանքները կանխատեսելու հնարավորություն ընձեռող կանոնների շարադրանք, ի տարբերություն քվերակության և դրան նախորդող օրվան՝ որի կապակցությամբ նույն մեթոդաբանությունը սահմանափակվել է միայն Օրենքի քննարկվող մասի գետեղմամբ՝ գրկելով Հեռարձակողին հնարավոր չարաշահումների գոհ դառնալուց զերծ մնալու հնարավորությունից:

Ամփոփելով վարչական վարույթի շրջանակում ներկայացված բացատրությունը, Հեռարձակողը գտնում է, որ արձանագրությունում զետեղվածն անհիմն է, անորոշ, անկանխատեսելի և անհասկանալի, հետևաբար արձանագրությունում նկարագրվածը և մեջբերված իրավական նորմը չեն կարող վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների համար պարտավորություն է սահմանված՝ ընտրությունների քվերակության օրը և դրան նախորդող օրն որևէ քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ չհեռարձակելը, որը՝ Հեռարձակողի կողմից չի պահպանվել և ավելին, ընտրությունների քվերակության օրը՝ Հեռարձակողի ընտրությունների լուսաբանման թողարկումների ընթացքում եթեր է հեռարձակվել կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գործունեությունը լուսաբանող ռեպորտաժներ, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ցուցակներում ընդգրկված ներկայացուցիչների մասնակցությամբ ռեպորտաժներ՝ քարոզչությանը նպաստող նյութի հեռարձակմամբ:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը

պարտավոր էր պահպանել Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Սույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով, 56-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված տույժը՝ գրավոր նախազգուշացում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

01 հուլիսի 2021թ.

ք. Երևան

Ճիշտ է

Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնակատար

Տ. Թանգյան